

0000 00 000000000 000000000 «00000000» 00 «000000000000» 000000000000000000
0000000000000 0000000000 00000000000000 00000000 «CineDOC-Tbilisi» 00000000000
0000000000

Փառատոնի շրջանակներում հանդիսատեսի դատին ներկայացվեցին Վրաստանի, Հայաստանի, Ռուսաստանի, Թուրքիայի, Իսրայելի եւ եւս 20 երկրի կինոռեժիսորների շուրջ 50 վավերագրական ֆիլմերը:

Միջոցառումն անցկացվեց վավերագրական ֆիլմերի Ամստերդամի միջազգային փառատոնի եւ Վրաստանի մշակույթի նախարարության աջակցությամբ:

Այդ օրը բազմամարդ էր «Ռուսթավելու» կինոթատրոնի դահլիճը, որտեղ Մոսկվայում բնակվող, հայ ճանաչված կինոռեժիսոր Արմեն Գասպարյանը հանդիսատեսի դատին ներկայացրեց իր «Կորցրած մանկություն» վավերագրական ֆիլմը: Հանդիսատեսն ընկալմամբ ընդունեց ֆիլմում ներկայացվող, ռեժիսորի հայրենի քաղաք Գյումրիում ծավալվող իրադարձությունները: Կյանքի սովորական ընթացքն արտացոլող ֆիլմը դիտելիս՝ հանդիսատեսն այսօր էլ սարսուռով է ընկալում արդեն քառորդ դար առաջ տեղի ունեցած երկրաշարժի հետեւանքները:

Ֆիլմի գլխավոր հերոսուհին մի աղջնակ է, որ խնամում է կրտսեր եղբայրներին եւ, բացի սովորական դպրոցից, հասցնում է հաճախել նաեւ երաժշտական ուսումնարան, որտեղ սովորում է ջութակ նվագել: Երեխաները հայր չունեն, մայրը ողջ օրը աշխատում է նվազ աշխատավարձով: Ռեժիսորը երկարաձգված կադրերի միջոցով, կենցաղային առանձին մանրամասների ընդգծմամբ, բարձրացնում է աջակցություն ստանալու հույսերը կորցրած քաղաքին օգնության ձեռք մեկնելու անհրաժեշտությունը:

Այդ մասին, պատասխանելով հավաքվածների հարցերին, ռեժիսորը խոսեց նաեւ ֆիլմի ցուցադրումից հետո: Նա չի ընդունում «Արվեստը՝ միայն արվեստի» համար կարգախոսը: Նրա կրեդոն՝ օգնել բոլոր նրանց, ովքեր կարիքի մեջ են, հակադրվում է հասարակական հաստատություններում ու պետական կառույցներում արմատացած անտարբերությանն ու բյուրոկրատիզմին: Ռեժիսորի համոզմամբ, հենց դա է խլում մանկությունն այն երեխաներից, ովքեր պետք է զարգացնեն իրենց շնորհը:

00000 0000000000